

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-06-2022 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Ց ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ 1	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.00548	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2005-11-21	
1.5 ՀՎՀՀ-ն	02580459	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10547512	
	+(374)55588049	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	r2e2.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	info@r2e2.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Կարեն Ասատրյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	23	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր	Էներգախնայողության ծրագիր	354,836,531
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր	Էներգախնայողության ծրագիր	225,233,154
	Արևային լողացող Ֆոտովոլտային կայանների զարգացման ծրագիր	18,938,696
	Խորհրդատվական ծառայություն	118,714,580
	ՀՀ բանկերում ներդրված ավանդներից տոկոսներ	36,058,341

	Ֆինանսական կառույցների միջոցով ՀՀ -ում էներգաարդյունավետության ծրագիր	253,906,842
	Դաշտաղեմ, Թալին ծրագիր	320,000,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		0
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվություններ/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Արևային լողացող Ֆոտովոլտային կայանների գարգացման ծրագիր	13,921,753	
Նախապատրաստման աջակցության ծրագիր	48,665,363	
Ֆինանսական կառույցների միջոցով ՀՀ -ում էներգաարդյունավետության ծրագիր	301,123,730	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,422,169,469	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	363,710,846	

Նշումներ՝

2021թ. ընթացքում հիմնադրամի կողմից կատարվել է ներդրում ՀՀ բանկերում ավանդների տեսքով՝ 708 355 440 դրամի չափով և իրականացվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման գծով ծախսեր՝ 13 571 561 դրամի չափով:

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 33 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆՔՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական դրամով

31 դեկտեմբեր 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

24.06.2022

N 022217

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վարդյան
Աուդիտորական ծառայությունների փոխառուցման
լիցենզիա թիվ 054 տրված 22 ինստիտուտների
և էլեկտրոնային ծախսերի հոսքերի կողմից



ԱՆԿԱՄ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի
և էներգախնայողության հիմնադրամի Հոգաբարձուներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX

Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2021թ-ի մայիսի 14-ին տրված եզրակացությամբ արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք գերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից գերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան ուղիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը ակրող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Պոնամարևա

24.06.2022թ



ՏՐԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Շանթա գրություն	(հազար դրամ)	
		2021թ.	2020թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	2,738	17,751
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	5	34,425	43,032
Ոչ նյութական ակտիվներ		157	352
Դեբիտորական պարտքեր	6	1,076,293	1,569,999
Տրված փոխառություններ	7	896,487	855,935
		<u>2,010,100</u>	<u>2,487,069</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		14,831	20,936
Դեբիտորական պարտքեր	6	598,699	633,141
Տրված փոխառություններ	7	250,976	197,794
Ժամկետային ավանդներ	8	922,839	419,676
Դրամական միջոցներ	9	310,185	226,976
		<u>2,097,530</u>	<u>1,498,523</u>
		<u>4,107,630</u>	<u>3,985,592</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ			
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարձակալության գծով պարտավորություն	5	30,342	48,306
Ակտիվներին վերաբերող շնորհներ		1,599	19,626
Ստացված փոխառություններ	10	3,472,439	3,737,022
		<u>3,504,380</u>	<u>3,804,954</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարձակալության գծով պարտավորություն	5	9,473	-
Ստացված փոխառություններ	10	85,272	85,347
Հետաձգված եկամուտ	11	376,764	62,176
Կրեդիտորական պարտքեր	12	67,464	100,673
		<u>538,973</u>	<u>248,196</u>
		<u>4,043,353</u>	<u>4,053,150</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Զուտ ակտիվ		64,277	(67,558)
Կուտակված արդյունք			
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվ		<u>4,107,630</u>	<u>3,985,592</u>

Կարեն Ասատրյան

Տնօրեն
24.06.2022թ.



Գայանե Բարխանյան

Գլխավոր հաշվապահ

**ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱԵՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

		<i>(հազար դրամ)</i>	
	<i>Մանրագրություն</i>	2021թ.	2020թ.
Շնորհներից եկամուտներ	13	90,392	159,949
Ֆինանսական եկամուտ	14	47,401	43,450
Օտոայությունների մատուցումից եկամուտ	15	140,925	91,267
Այլ եկամուտ		13,148	5,563
Օրագրային ծախսեր	16	(114,619)	(72,376)
Վարչական ծախսեր	17	(189,371)	(196,382)
Ֆինանսական ծախսեր	18	(32,431)	(28,150)
Գործառնական գործունեությունից արդյունք		(44,555)	3,321
Արժեզրկման ծախս	19	(6,552)	(2,821)
Ֆինանսական եկամուտ (ավանդների գծով)	14	38,377	16,113
Փոխարժեքային տարբերության գծով օգուտ/ (վնաս), զուտ		144,565	(175,079)
Արդյունք մինչև հարկերը		131,835	(158,466)
Շահութահարկի գծով ծախս		-	(4,913)
Տարվա արդյունք		131,835	(163,379)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		131,835	(163,379)

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	<i>(հազար դրամ)</i>	
	Կանոնադրական կապիտալ	Ընդամենը կապիտալ
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	95,821	95,821
Տարվա արդյունք	(163,379)	(163,379)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(67,558)	(67,558)
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	(67,558)	(67,558)
Տարվա արդյունք	131,835	131,835
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	64,277	64,277

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	<i>(հազար դրամ)</i>	
	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	131,835	(163,379)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	19,841	54,912
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ամորտիզացիա	8,606	8,606
Շահութահարկի գծով ծախս	-	4,913
Տոկոսային ծախսեր	32,431	33,871
Տոկոսային եկամուտ փոխառություններից	(83,295)	(43,450)
Տոկոսային եկամուտ ժամկետային ավանդներից	(2,483)	(16,113)
Շնորհներից եկամուտ	(90,392)	(159,949)
Ակնկալվող պարտքային կորուստների աճ/ (նվազում)	6,552	2,821
Փոխարժեքային տարբերությունից կորուստ/(օգուտ)	(144,565)	175,079
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(121,470)	(102,689)
Դերիտորական պարտքերի նվազում/(աճ)	528,148	491,299
Պաշարների նվազում/(աճ)	6,105	(6,290)
Կրեդիտորական պարտքերի նվազում/(աճ)	(33,548)	28,689
	379,235	411,009
Վճարված տոկոսներ	(27,708)	(28,072)
Վճարված շահութահարկ	-	(1,339)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	351,527	381,598
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ կյութական ակտիվների ձեռքբերում	(4,634)	(829)
Ժամկետային ավանդների մարում/ (ներդրում), զուտ	(503,164)	(370,000)
Ստացված շնորհներ և շնորհների հեետ վերադարձ, զուտ	386,956	156,607
Ստացված տոկոսային եկամուտ	231,527	54,232
Փոխառությունների տրամադրում, զուտ	(93,734)	(84,200)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսք	16,951	(244,190)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված փոխառությունների մարում	(264,658)	(82,170)
Վարձակալության պարտավորության մարում	(13,332)	(13,332)
Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(277,990)	(95,502)
Դրամական միջոցների զուտ հոսքեր	90,488	41,906
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(7,279)	7,296
Դրամական միջոցների տարվա սկզբում	226,976	177,774
Դրամական միջոցների տարվա վերջում	310,185	226,976

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿՆԵՐԸ

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամը հիմնվել է Հայաստանի Հանրապետության կառավարության (Կառավարություն) 2005թ. Ապրիլի 28-ի թիվ 799 որոշմամբ: Հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է (Հիմնադիր): Հիմնադրամի նպատակներն են.

- էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների իրականացմանը նպաստելը,
- էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում Հայաստանի շուկայի զարգացմանը խթանելը,
- շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնաձին ազդեցության նվազմանը նպաստելը,
- էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված մեխանիզմների մշակումը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համապատասխան լիազորություններ տրամադրվելու դեպքում պետության հետ կնքվող գործակալության պայմանագրի հիման վրա պետության անունից ոլորտի զարգացմանը խթանող վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման կազմակերպումը:

Մրագիրը նախատեսում է հետևյալ բաղադրիչները.

- Բաղադրիչ 1 Մրագրի միջոցները տրամադրվում են մասնակից ֆինանսական հաստատություններին էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերում համապատասխան պահանջները բավարարող շահառուների կողմից կատարած ներդրումները ֆինանսավորելու նպատակով:
- Բաղադրիչ 2 Հիմնադրամը կատարում է էներգախնայողության հետ կապված ներդրումներ հանրային շենքերում:

2021թ.-ին Հիմնադրամն իրականացրել է հետևյալ ծրագրերը.

- Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության առաջարկով իրականացրել է մասնավոր ընկերության կամ կոնսորցիումի ընտրության գործընթացը «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Այգ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» (Մրագիր) իրականացման համար՝ նախատեսված 200 ՄՎտ դրվածքային հզորությամբ, ցանցին միացված «Այգ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման նպատակով:
- Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի և Ֆրանսիական Տրանսէներգիա (TRANSENERGIE) կազմակերպության համագործակցությամբ մշակվել է «Հայաստանում լողացող արևային կայանների զարգացման ծրագիր», որի արդյունքում դեկտեմբերի 11-ին 800,000 եվրո դրամաշնորհը հավանության է արժանացել Ֆրանսիայի կառավարության կողմից:

Ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի փետրվարի 25-ին: Մշակվել է Հայաստանի տարածքում գտնվող բոլոր լճերի և արհեստական ջրամբարների ցուցակը՝ իրենց հիմնական բնութագրական տվյալներով: Այնուհետև տվյալ ցուցակից, տեխնիկական և բնապահպանական և այլ խնդիրները հաշվի առնելով, պետք է ընտրվեին երեք ջրամբար: Հիմնադրամի և Տրանսէներգիա ընկերության հետ համատեղ քննարկումների արդյունքում ընտրվել են հետևյալ ջրամբարները՝ Ազատի ջրամբար (Արարատի մարզ), Ապարանի ջրամբար (Արագածոտնի մարզ) և Երևանյան ջրամբար (Երևան):

Ծրագրի շրջանակում իրականացվել է ընտրված 3 ջրամբարի համար ցուցադրական արևային կայանի համար տեխնիկատնտեսական հիմնավորում:

- Կանաչ կլիմայի հիմնադրամին (ԿԿՀ) հավատարմագրվելու նպատակով Հիմնադրամը ստացել է դրամաշնորհի բարելավելու Հիմնադրամի Գործառնական ձեռնարկը, ինչպես նաև մշակելու երկու ծրագրերի համառոտագրեր ԿԿՀ-ի ֆինանսավորմանը ներկայացնելու նպատակով: Ծրագրի արժեքն է 254,000 ԱՄՆ դոլար:

Հավատարմագրումից հետո Հիմնադրամը կկարողանա իրականացնել մինչև 50 մլն. ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ ծրագրեր, ինչպես նաև տրամադրել ենթադրամաշնորհներ:

Հավատարմագրման գործընթացի ավարտը

նախատեսվում է 2022 թ-ին:

- «Հայաստանի Հանրապետության չգազաֆիկացված համայնքների իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր», «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամը, «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ն, «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն, «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2017թ.-ին ստորագրել են պայմանագիր Հայաստանում չգազաֆիկացված համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագրի վերաբերյալ: Ծրագրի նպատակն է ֆինանսական կառույցների միջոցով ֆինանսավորել ներդրումները մաքուր էներգիայի ոլորտում: Վերջինս ուղղված է Հայաստանի շուրջ 280 համայնքներում ֆինանսական կազմակերպությունների միջոցով բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը և ֆինանսավորել ներդրումները մաքուր էներգիայի զարգացման ոլորտում: Ի սկզբանե ծրագիրը ուղղված է եղել Հայաստանի շուրջ 280 չգազաֆիկացված համայնքների հետ, որոնք ընդգրկում են շուրջ 37 հազար տնային տնտեսություններ, կապված հարցերի լուծմանը: Հետագայում (սկսած 2020թ.-ից) ծրագիրը ընդլայնվել է Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներով: Այս ծրագրի իրականացման նպատակով Հիմնադրամը համագործակցում է մի շարք ֆինանսական կառույցների հետ, որոնց թվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն, «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ն, «Ագրոլիզինգ Լիզինգային ՎԿ» ՍՊԸ-ն, «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՍՓՆԻ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն, «Ֆաստ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն, «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն և «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն:
- Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի, «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ առևտրային բանկերի կողմից համատեղ իրականացվող Համայնքային էներգաարդյունավետության ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության համայնքների կողմից էներգաարդյունավետությանն ուղղված ներդրումների ֆինանսավորումը: Ավելին, ծրագրի նպատակն է նաև նվազեցնել ոչ արդյունավետ էներգասպառումը և ընդլայնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի տեխնոլոգիաների օգտագործումը: Ձեռնարկված միջոցները կնպաստեն էլեկտրաէներգիայի և ջրատաքացման համար վճարվող գումարի կրճատմանը, հետագայում նաև գրոյացմանը:
- Ինժեներական խորհրդատվական ծառայությունների տրամադրում Գերմանահայկական Հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում»- ծրագրի շրջանակներում (ֆինանսավորող KfW)-Ծրագրի նպատակն է աջակցել էներգախնայողության միջոցառումների ֆինանսավորմանը Հայաստանի ՓՄՁ-ներում:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝
Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մելիք Ադամյան փ, 1:
Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը,
պետական գրանցման համար՝ 222.160.00548:
Հիմնադրամի աշխատակիցների թվաքանակը՝ 31.12.2021թ. դրությամբ կազմել է 20 մարդ
(2020թ.՝ 22 մարդ):

2. ՊԱՏՐԱՍՏԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ("ՖՀՄՄ") պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա:

Գործառնական և ներկայացման արժույթ

Հիմնադրամի գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

Դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2021թ. հունվարի 1-ից և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, թեև դրանց վաղաժամկետ կիրառումը թու յլատրվում է: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Հիմնադրամը ժամանակից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

Ստորև ներկայացված փոփոխված ստանդարները և դրանց մեկնաբանությունները ըստ
ակնկալիքների էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների
վրա:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա
Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- COVID-19-ի հետ կապված զիջումներ կապված վարձակալության գծով 2021թ. Հունիսի 30-ից
հետո ընկած ժամանակաշրջանների համար (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)
- «Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)
- «Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)
- «Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր» (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)
- 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16
փոփոխություններ):
- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1
փոփոխություններ):

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից
տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ
Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու
ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով
հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային
հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են
ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը
և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը
որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է
տարվա արդյունքում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի
օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է
այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու
համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են
ստորև.

- | | |
|------------------------------|------------|
| • Շենք շինություն | 10-20 տարի |
| • Մեքենաներ և սարքավորումներ | 1-8 տարի |
| • Այլ | 1-8 տարի |

3.3. Վարձակալված ակտիվներ

Վարձակալությունները հաշվառվում են՝ ճանաչելով օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը, բացառությամբ.

- Ցածրարժեք ակտիվների վարձակալությունը, և
- Մինչև 12 ամիս կամ ավելի կարճ ժամկետով վարձակալությունը:

Վարձակալական պարտավորությունները չափվում են վարձակալության ժամկետի ընթացքում կատարվող պայմանագրային վարձավճարների ներկա արժեքով, զեղչված վարձակալությամբ ենթադրվող դրույքով, եթե այդ դրույքը հնարավոր է հեշտությամբ որոշել: Եթե ոչ (սովորաբար պատահող դեպքեր), հաշվարկը կատարվում է կիրառելով վարձակալի կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սկզբնապես չափվում են վարձակալական պարտավորության չափով, հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները և գումարած հետևյալը.

վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, և այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվն ապամոնետաժելիս կամ քանդելիս:

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալության գծով պարտավորությունը ավելացվում է մնացորդային արժեքի նկատմամբ տոկոսային ծախսով և նվազեցվում է կատարված վճարումների չափով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացվում է ուղիղ-գծային մեթոդով՝ վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում կամ հիմքային ակտիվի տնտեսական օգտագործման ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է վարձակալության ժամկետից:

3.4. Ֆինանսական գործիքներ

3.4.1 Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

3.4.2 Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները:

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլվում են ֆինանսական եկամտում, ֆինանսական ծախսերում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է ֆինանսական ակտիվների արժեզրկման կորուստներում:

3.4.3 Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Հիմնադրամը հաշվառում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորուստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Հիմնադրամը գնահատում է ֆինանսական ակտիվների արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են ելնելով ժամկետանց օրերից:

3.4.4 Տրամադրված փոխառություններ

Հիմնադրամը լրիվ պահուստավորում է բոլոր այն փոխառությունների պորտֆելները, որոնց մարումներն ապահովված են վերջնական փոխառուի կողմից կատարված վճարումներով և որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 90 օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 90 օրով գերազանցելու դեպքում տրամադրված փոխառությունները համարվում են անհավաքագրելի: Այս փոխառությունները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ, ընգրկվում են «Փուլ 3»-ի մեջ: Մինչև 30 օր ժամկետանց փոխառությունների մայր գումարները և տոկոսները ընգրկվում են «Փուլ 1»-ի մեջ, և «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են առաջին դասի ակտիվների համար: 30-ից մինչև 90 օր ժամկետանց փոխառությունների մայր գումարները և տոկոսները ընգրկվում են «Փուլ 2»-ի մեջ, և «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

3.4.5 Ստացված փոխառություններ

Ստացված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

3.4.6 Առևտրային կրեդիտորական պարտքեր

Առևտրային կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հիմնադրամի դրամական միջոցները և նրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվների մնացորդները, Կենտրոնական գանձապետարանի հատուկ հաշվի մնացորդները, դրամական միջոցները ճանապարհին և կարճաժամկետ ներդրումները՝ մինչև 3 ամիս ժամկետով:

3.6. Ծնորհներ

Ծնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Ծնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ ձեռքբերումն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերվող շնորհ և սիստեմատիկորեն ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

